**Արձանագրություն N 3**

**<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՇՁԲ-2023/3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

31 օգոստոսի 2023թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ ՝ Լ. Քալանթարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մկրտչյան
Ա. Ծատուրյան

Քարտուղար՝ Վ. Ղազարյան

1. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՇՁԲ-2023/3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ՝ Համակարգ/ բացվել են 2023թ. օգոստոսի 31-ին, ժամը 12:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է սեպտեմբերի 1-ին, ժամը 12:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2023թ. սեպտեմբերի 4-ին, ժամը 11:00:

**<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՇՁԲ-2023/3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

04 սեպտեմբերի 2023թ.
ժամը՝ 11:00

6. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՇՁԲ-2023/3>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում 2023թ. սեպտեմբերի 1-ին, ժամը՝ 12:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | **Մասնակցի անվանումը** | **Տվյալները** |
|---|---|---|
| 1 | Քոփի Փրինթ ՍՊԸ | Ներսիսյան 1, 125, հեռ. +37491192900 |
| 2 | <<Հովսեփյան>> ՍՊԸ | ք. Երևան, Վ. Վաղարշյան 24/3, հեռ. 043 107090 |
| 3 | <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ | Ք. Երևան, Ծ. Իսակովի 48/2, հեռ. +37410726726 |
| 4 | Պրինտարմ ՍՊԸ | ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա Անդրանիկի փ. 94 բն.42, հեռ 091 40 25 86 |
| 5 | Յասոն ՍՊԸ | ՀՀ Կոտայքի մարզ, գ. Զորաղբյուր, Սևանի 4, հեռ. 091407704 |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման առարկայի գնման հայտով հաստատված գնման ընդհանուր գինը | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը* (ՀՀ դրամ) | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քոփի Փրինթ ՍՊԸ | | <<Հովսեփյան>> ՍՊԸ | | <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ | | Պրինտարմ ՍՊԸ | | Յասոն ՍՊԸ | |
| | | | | | **Գնային առաջարկը** | | **Գնային առաջարկը** | | **Գնային առաջարկը** | | **Գնային առաջարկը** | | **Գնային առաջարկը** | |
| | | | | | առանց ԱԱՀ գումար | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ գումար | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ գումար | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ գումար | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ գումար | ներառյալ ԱԱՀ |
| 1 | *1. այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն* | դրամ | 1 | 4800 | 3998 | 4797.6 | 4600 | - | 10000 | 12000 | 30000 | 36000 | - | - |
| 2 | *2. այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն* | դրամ | 1 | 375840 | 306800 | 368160 | 303600 | - | 540000 | 648000 | 550000 | 660000 | 432000 | 518400 |
| 3 | *3. այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն* | դրամ | 1 | 104400 | 86998 | 104397.6 | 104000 | - | 150000 | 180000 | 220000 | 264000 | 120000 | 144000 |
| 4 | *4. այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն* | դրամ | 1 | 21600 | - | - | 21600 | - | 36000 | 43200 | 60000 | 72000 | 42000 | 50400 |

***Եթե մասնակիցը չի հանդիսանում ԱԱՀ վճարող, ապա լրացվում է միայն "առանց ԱԱՀ" սյունակը:**

9. <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ-ի կողմից 1-4 չափաբաժինների մասով, Պրինտարմ ՍՊԸ-ի կողմից 1-4 չափաբաժինների մասով, Յասոն ՍՊԸ-ի կողմից 2-4 չափաբաժինների մասով ներկայացված հայտերը աճուրդի ամփոփումից հետո Համակարգը ավտոմատ մերժել է, քանի որ ներկայացված գնային առաջարկները գերազանցել են գնման առարկաների գնման հայտերով հաստատված գնման ընդհանուր գները:

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ են հանդիսանում.

- Քոփի Փրինթ ՍՊԸ-ն՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով,
- <<Հովսեփյան>> ՍՊԸ-ն՝ 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

11. Հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ Քոփի Փրինթ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի: Վերջինիս կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում Քոփի Փրինթ ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղման փոխարեն ներկայացվել է միայն Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ընդհանուր էջի հղումը /https://bo.e-register.am/am/declarations/20198/view/:

12. Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և Քոփի Փրինթ ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

13. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՇՁԲ-2023/3>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել 2023թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

**<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՇՁԲ-2023/3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

06 սեպտեմբերի 2023թ.
ժամը՝ 11:00

14. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում Քոփի Փրինթ ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է իրական շահառուների մասին նոր հայտարարագիրը, ուստի հանձնաժողովը որոշեց Քոփի Փրինթ ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող:

15. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՇՁԲ-2023/3>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

- ճանաչել ընտրված մասնակիցներ

- Քոփի Փրինթ ՍՊԸ-ին՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով,
- <<Հովսեփյան>> ՍՊԸ-ին՝ 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

- մերժել մյուս մասնակիցների հայտերը, մասնավորապես՝

- <<Հովսեփյան>> ՍՊԸ-ին՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով,
- Քոփի Փրինթ ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով:

16. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

17. Ընտրված մասնակիցների հետ գնման պայմանագրերը կնքվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ---------------------- Լ. Քալանթարյան

Հանձնաժողովի անդամներ՝ ---------------------- Մ. Մկրտչյան

---------------------- Ա. Ծատուրյան

Քարտուղար՝ ---------------------- Վ. Ղազարյան